Խաչիկ Դաշտենց

Ֆայտոն Ալեքը

3

Մի ամիս հետո պատահեց մի դեպք,
Որ սաստիկ ցնցեց Ֆայտոն Ալեքին:
Քաղաքի ծայրում ապրում էր մի մարդ,
Անունը Չփլաղ, ծանոթ ամենքին:

Այդ մարդը ուներ երկանիվ մի կառք,
Որին լծած էր հասարակ մի ձի,
Եվ այդ ծուռումուռ սայլակին նստած
Նա ամեն ծեգին գնում էր գործի:

Մի անիվը՝ փոքր, մյուսը՝ ահագին,
Ինքը՝ ծերացած, երիվարը՝ կաղ,
Սայլը քշում էր ամեն ուղղությամբ,
Հասնում էր մինչև Վարդապետի բաղ:

Բանակից անպետք ձիեր էր գնում
Եվ գիրացնելով հանում էր շուկա,
Կամ «լվի ծաղկից» դեղեր էր շինում
Եվ ուղարկում էր մինչև Օդեսա:

Մի օր գիշերով, գետափ գնալիս,
Ճամփին գտել էր մի մաշված անիվ,

Տարել էր Բիրժա, որ ցույց տա մարդկանց,
Ու հավաքվել էր ժողովուրդ անթիվ:

Իսկ մեյդանի մեջ բեռնակիր Մկոն
Գոտին թույլ կապած, ձեռքը ականջին,
Ջիլ բղավում էր. «Չփլաղ Փիլոսը
Հրաշք անիվ է գտել գետափին»:

Սելավի Սեթը այդ օր մի փոքրիկ
Նախիր էր քշել շուկայի կենտրոն,
Երկու գեր հորթի մեջտեղում կանգնած
Թունդ սակարկում էր գյումրեցի Ծիտրոն:

Լսեցին թե չէ՝ Բիրժա գնացին,
Ողջ առևտուրը թողնելով կիսատ,
Թողած նախիրը, թուխ երինջները
Եվ դախլի վրա փողերը դիզած:

Ալեքն էլ եկավ: Հենց տեսավ թե չէ՝
Գլուխը բռնած շուռ եկավ մեջքով.
Խնդացիք վրաս, խելոի տեղ դրիք,
Դե, հիմի աշեք սեփական աչքով:

Ասաց, ու արագ մի կողմ քաշվելով,
Թիկունքը հենեց սուրբ Փրկչի պատին.
Հայտնվեց նաև Պոլոզ Մուկուչը,
Հետը բերելով դարբին Մեխակին:

Վազեվազ եկան Նալբն Կարոն, Նապոն,
Ուռումի Կոլան, Կալոսնիկ Ակոն,
Ճերմակ Համոյի որսորդը եկավ՝
Քսան-երեսուն որսի շներով:

Տեղ հասան նաև ուրիշ գյումրեցիք՝
Չանախ Վարոսը և Ֆոիկ Տիկոն,
Եվ Յաղլի-Բուղլի Նազարը եկավ,
Գըմփըռ Ցոլակը, Լիմոնադ Կարոն:

Ու շոշափեցին աջից ու ձախից,
Ջննեցին անգամ մանրադիտակով,
Սեղմեցին ոտքով, ձեռքով, գործիքով
Ու գլորեցին հրապարակով:

Եվ համոզվեցին, որ իրենց դաշտով
Իրոք անցել է հրաշք մեքենա,
Ու խմբով տարան գետը գցեցին,
Որ այդ չարիքը Գյումրուց վերանա:

Տասնութ թվին, երբ երկիրն էր խառն
Եվ նախարար էր փոխվում ամեն օր,
Չփլաղ Փիլոսը Բոստան Օնեսին
Գյումրում հռչակեց հայոց թագավոր:

Ֆայտոն Ալեքը հագիվ իր կառքով
Օնեսին փրկեց դաշնակի ձեռքից,
Մինչև այդ հողմոտ օրերի միջից
Ծնվեց մի կարմիր բոլշևիկ երկիր: